



ՀԱՇՏԱՐԱՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԱՌՑԱՆՑ ՀԱՐԹԱԿԻ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի (այսուհետ՝ Գրասենյակ) առցանց հարթակը նախատեսված է Հաճախորդների կողմից Գրասենյակ ներկայացված գործին առնչվող փաստաթղթեր ստանալու և ուղարկելու համար: Գրասենյակի առցանց հարթակի (այսուհետ՝ Հարթակ) անվտանգ օգտագործման համար անհրաժեշտ է իմանալ՝

- Գրասենյակի կողմից Հաճախորդին SMS հաղորդագրությամբ տրամադրված PIN կոդը անհատական կոդ է, որը չպետք է տրամադրել կամ հասանելի դարձնել 3-րդ անձանց, քանի որ դրա օգտագործմամբ Ձեր անձնական տվյալները կարող են դառնալ հանրամատչելի:
- Հարթակում առկա տեղեկատվությունը, այդ թվում՝ կցված ֆայլերը, նախատեսված են բացառապես հասցեատիրոջ համար և հանդիսանում են գաղտնի տեղեկատվություն, ուստի այս Հարթակի միջոցով ստացված տվյալները Դուք պարտավորվում եք չտրամադրել այլ անձանց:
- Եթե Դուք սխալմամբ կարողացել եք մուտք գործել Հարթակ և տիրապետել Ձեզ չհասցեագրված տեղեկատվությանը, խնդրում ենք դուրս գալ Հարթակից և անմիջապես տեղեկացնել այդ մասին Գրասենյակին (060-70-11-11, info@fsm.am):
- Ստացված տեղեկատվության մասամբ կամ ամբողջությամբ այլ նպատակներով ցանկացած օգտագործումը, հրապարակումը կամ տարածումն արգելվում է:
- Հարթակ մուտք գործելով՝ հաստատում եմ, որ ծանոթ եմ սույն պայմաններին, համաձայն եմ դրանց և դրանք չպահպանելու դեպքում կարող եմ կրել օրենքով նախատեսված պատասխանատվությունը: